

Ե.23.00 - ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ե.23.01 - ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ, ՇԵՆՔԵՐ, ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԿԱ

1. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ

Շինարարական կոնստրուկցիաների հուսալիության տեսությունը և դրա կիրարկությունը հաշվարկներում: Շինարարական կոնստրուկցիաների հաշվարկն ըստ առաջին խումբ սահմանային վիճակի:

Շինարարական կոնստրուկցիաների հաշվարկն ըստ երկրորդ խումբ սահմանային վիճակի: Շենքերի և կառույցների կրող համակարգերի վրա ազդող բեռները և ազդեցությունները:

Շենքերի և կառույցների կրող համակարգերի տեսակները, դրանց առանձնահատկությունները:

Բազմահարկ շենքերի կոնստրուկցիաները և կոնստրուկտիվ սխեմայի և նյութի ընտրությունը: Երկաթբետոնե կոնստրուկցիաներով շենքերի և կառույցների նախագծման առանձնահատկությունները:

Մետաղե կոնստրուկցիաներով շենքերի և կառույցների նախագծման առանձնահատկությունները:

Քարե և ամրանաքարե կոնստրուկցիաներով շենքերի և կառույցների նախագծման առանձնահատկությունները:

Փայտե կոնստրուկցիաներով կառույցների նախագծման առանձնահատկությունները: Երկաթբետոնե կոնստրուկցիաների ճաքակայունությունը:

Ճաքերի բացվաքների լայնության որոշումը:

Երկաթբետոնե կոնստրուկցիաների կոշտության և ճկվածքների որոշումը:

Սողքի էությունը: Դրա ազդեցությունը շինարարական կոնստրուկցիաների հաշվարկներում:

Ճիգերի վերաբաշխումը ստատիկորեն անորոշելի համակարգերում, որոնք աշխատում են առաձգականության սահմանից դուրս:

Շենքերի և կառույցների հաշվարկների առանձնահատկությունը կոնստրուկցիաների ոչ առաձգական աշխատանքի դեպքում:

Մեծաթռիչք ծածկերի նախագծման հիմնական դրույթները:

Հասարակական և հատուկ նշանակության մեծաթռիչք շենքերի կոնստրուկցիաներ: Ռեգերվուարներ, բունկերներ և սիլոսներ:

Բարձրաբերձ կառույցներ: Թերթավոր կոնստրուկցիաներ:

Կախովի ծածկերի նախագծման գլխավոր սկզբունքները:

Եռքային միացումների ու կարանների տեսակները: Հաշվարկային առանձնահատկությունները: Հեղույսային միացումների տեսակները և դրանց դասավորությունը կոնստրուկցիաներում:

Շինարարական կոնստրուկցիաների փորձարարական հետազոտությունների ժամանակակից մեթոդները:

Շենքերի և կառուցվածքների վերակառուցման, վերականգնման և ուժեղացման սկզբունքները:

Շենքերի և կառույցների հետազննության նպատակը և փուլերը:

Շենքերի և կառուցվածքների տեխնիկական վիճակի գնահատումը:

Շենքերի և կառուցվածքների վերակառուցման անհրաժեշտ մակարդակի նախանշման չափանիշներն ու իրականացման լավագույն եղանակների ընտրությունը: Շենքերի քարե կոնստրուկցիաների վերականգնումը և ուժեղացումը:

Ժամանակակից համակարգչային ծրագրային փաթեթների կիրառությունը շինարարական կոնստրուկցիաների հաշվարկի և համակարգչային մոդելների հետազոտությունների համար, դրանց տարբերությունները և առանձնահատկությունները:

Նախալարված երկաթբետոնե և մետաղե կոնստրուկցիաների պատրաստման և հաշվարկի առանձնահատկությունները:

Սյունների և պարզունակների միացման տեսակները ու դրանց հաշվարկների առանձնահատկությունները:

Այլումինե կոնստրուկցիաների նախագծման առանձնահատկությունները: Կոնստրուկցիա-ների միացման տեսակները:

Նախալարված մետաղե թերթավոր կոնստրուկցիաներ: Նախալարված ստատիկորեն անորոշելի շինարարական կոնստրուկցիաներ: Շինարարական կոնստրուկցիաների փորձարկումների անցկացման մեթոդիկան և սարքավորումները: Արդյունքների մշակման տեսության հիմնական դրույթները: Շինարարական կոնստրուկցիաների կայունությունը:

Երկրաշարժից առաջացող իներցիայի ուժերի (սեյսմիկ ուժեր) որոշման մեթոդները:

Շինարարական կոնստրուկցիաների հաշվարկման եղանակների առանձնահատկությունները ըստ թույլատրելի լարումների, քայքայող բեռների և սահմանային վիճակների:

Շինարարական կոնստրուկցիաների ամրության գնահատումը պարզ և բարդ լարվածային վիճակներում: Ամրության տեսություններ:

Շինարարական կոնստրուկցիաների հաշվարկների առանձնահատկությունները աքսելերոգրամների կիրարման դեպքում:

Սեյսմիկ ուժի որոշումը ըստ ՀՀ-ում գործող սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերի:

Սեյսմիկ շրջաններում շենքերի և կառույցների նախագծման գլխավոր սկզբունքները:

Շենքերի և կառույցների ազատ տատանումների հաշվարկի և փորձարարական եղանակով գնահատման մեթոդները:

Սեյսմամեկուսացման համակարգերով շենքերի և կառույցների հաշվարկի և կոնստրուկտավորման առանձնահատկությունները:

2. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՆՆՈԼՈԳԻԱ

Շինարարական նյութերի հիմնական ֆիզիկաքիմիական ու ֆիզիկամեխանիկական հատկությունները և դրանց որոշման մեթոդները: Բաղադրակազմի, կառուցվածքի և հատկությունների կապը:

Շինարարական նյութերի տեխնոլոգիական ու ջերմաֆիզիկական հատկությունները և դրանց որոշման մեթոդները:

Շինարարական նյութերի երկարակեցությունը և հուսալիությունը:

Լեռնային ապարների դասակարգումն ըստ ծագումնաբանության: Հրաբխածին ապարների տեսակներն ու տիպերը, դրանց հիմնական բնութագրերը, կիրառման ուղղություններն ու առանձնահատկությունները:

Նստվածքային և մետամորֆիկ ապարներ, դրանց տեսակները, հիմնական բնութագրերը, կիրառման ուղղություններն ու առանձնահատկությունները:

Բնական քարային նյութերի հանույթը, մշակումն ու դրանցից իրականացվող շինարարական արտադրատեսակները:

Ընդհանուր հասկացություն կոմպոզիցիոն նյութերի և դրանց կազմության ու կառուցվածքի մասին:

Կերամիկական շինարարական նյութեր, արտադրության ելանյութերը, արտադրական հիմնական գործընթացները, արտադրատեսակները և դրանց հիմնական հատկությունները:

Շինարարական ապակի և հանքանյութային ձուլվածքային պատրաստվածքներ, դրանց ելանյութերը, արտադրական հիմնական գործընթացները, արտադրատեսակները և վերջիններիս հիմնական հատկությունները:

Ընդհանուր տեղեկություններ պոլիմերային շինանյութերի և պատրաստվածքների վերաբերյալ: Ընդհանուր տեղեկություններ ջրամեկուսիչ նյութերի վերաբերյալ:

Անօրգանական և օրգանական ջերմամեկուսիչ նյութեր և պատրաստվածքներ: Ընդհանուր տեղեկություններ դրանց կառուցվածքի ջերմաֆիզիկական ու ֆիզիկամեխանիկական հատկությունների և վերջիններիս որոշման մեթոդների մասին:

Ընդհանուր տեղեկություններ ակուստիկ (ձայնամեկուսիչ և ձայնակլանիչ) նյութերի վերաբերյալ: Ընդհանուր տեղեկություններ փայտի կառուցվածքի, արատների ու հատկությունների մասին: Փայտե շինարարական պատրաստվածքներ և արտադրանքներ փայտանյութի հենքի վրա (նրբատախտակ, փայտատաշեղային ու փայտանրբաթելային սալեր և այլն): Փայտանյութը կենսաբանական քայքայումից և այրումից պաշտպանելու միջոցները:

Կապակցանյութերի դասակարգումը և տեսակները: Օրգանական կապակցանյութեր (բիտումներ և ձյութեր), դրանց հիմնական հատկություններն ու կիրառման ոլորտները: Ասֆալտբետոնի բաղադրակազմը, պատրաստման ու կիրառման տեխնոլոգիաները, հիմնական բնութագրերը և դրանց որոշման մեթոդները:

Գիպսային կապակցանյութեր՝ դասակարգումը, արտադրության տեխնոլոգիաները, ամրացումը, հիմնական հատկությունները և կիրառումը:

Կրային և մագնեզիալ կապակցանյութեր՝ դասակարգումը, տեսականին, արտադրության տեխնոլոգիաները, ամրացումը, հիմնական հատկությունները, կիրառման ոլորտներն ու առանձնահատկությունները:

Հիդրավլիկ կապակցանյութեր՝ տեսակները և բնութագրիչ հիմնական հատկանիշները:

Պորտլանդցեմենտ՝ տարատեսակները, միներալոգիական բաղադրակազմերը, արտադրության տեխնոլոգիան, հիդրատացման և ամրացման մեխանիզմները, կազմության և հիմնական հատկությունների փոխադարձ կապը, հիմնական շինարարատեխնիկական հատկությունները և կիրառման ոլորտներն ու առանձնահատկությունները:

Բետոնների ու շաղախների բնական և արհեստական լցանյութեր՝ դրանց դասակարգումը, տեսակների հիմնական բնութագրերը և վերջիններիս որոշման մեթոդները:

Որմածքային, հարդարման և հատուկ տեսակների շինարարական շաղախներ, դրանց բնութագրիչ հատկությունները և վերջիններիս որոշման մեթոդները:

Բետոնների դասակարգումն ըստ պատրաստման ու կիրառման բնութագրիչ հատկանիշների, հիմնական ֆիզիկամեխանիկական ու ջերմատեխնիկական բնութագրերը և դրանց որոշման մեթոդները: Բետոնների մակնիշներն ու դասերը: Ծանր, թեթև և բջջային բետոններ:

Բետոնախառնուրդների հիմնական տեխնոլոգիական հատկությունները և դրանց որոշման մեթոդները: Բետոնի կառուցվածքի բարելավման հիմնական ուղիները:

Բետոնի կառուցվածքագոյացումը և ամրացումը: Ժամանակի, խոնավության, ջերմաստիճանի և այլ գործոնների ազդեցությունը կառուցվածքագոյացման գործընթացներում: Շոգ և ցուրտ եղանակային պայմաններում բետոններում կառուցվածքագոյացման գործընթացների առանձնահատկությունները և բավարար որակի ապահովման համար պահանջվող տեխնոլոգիական լուծումները:

Հատուկ նշանակության բետոններ /հիդրատեխնիկական, ճանապարհային, հրակայուն և այլն/, դրանց ելանյութերի, պատրաստման տեխնոլոգիաների ու կիրառման առանձնահատկությունները:

Գիպսային, կրային (սիլիկատային), ցեմենտային և այլ կապակցանյութերով արհեստական քարանյութեր ու պատրաստվածքներ, դրանց արտադրության տեխնոլոգիաները, հիմնական բնութագրերն ու կիրառման առանձնահատկությունները:

Միաձուլ շինարարությունում և բետոնե ու երկաթբետոնե պատրաստվածքների գործարանային արտադրությունների մեջ օգտագործվող

բետոնախառնուրդների պատրաստման ու կիրառման տեխնոլոգիաների տարբերակիչ առանձնահատկությունները, դրանց տեսակները և հիմնական բնութագրերը: Շինարարական ամրանային ու տրամատային պողպատներ: Ամրանների դասակարգման տեսակներն ու դասերը, դրանց հիմնական շահագործողական (ամրություն, դեֆորմատիվություն և այլն) բնութագրերը և վերջիններիս որոշման մեթոդները:

Բետոնե ու երկաթբետոնե հավաքովի պատրաստվածքների ու կոնստրուկցիաների գործարանային արտադրության հիմնական տեխնոլոգիական սխեմաները և արտադրանքի գործարանային պատրաստվածության աստիճանի բարձրացման ուղիները: Հումքային նյութերի և պատրաստի արտադրանքի պահեստավորումը:

Բետոնե ու երկաթբետոնե պատրաստվածքների և կոնստրուկցիաների կաղապարումը ուղղաձիգ ու հորիզոնական կաղապարներում և կասետային տեղակայանքներում: Բետոնախառնուրդի տեղադրումն ու խտացումը: Թռթռահարթակների տեսակները և տեխնոլոգիական պարամետրերը:

Բետոնե ու երկաթբետոնե պատրաստվածքների և կոնստրուկցիաների հասունացման պայմանները միաձույլ շինարարության և տարրերի գործարանային արտադրության ժամանակ: Տարրերի ջերմախոնավային մշակման եղանակները, դրա ընտրությունն ու ռեժիմները և այդ մշակումների ընթացքում պատրաստվածքում տեղի ունեցող ֆիզիկաքիմիական պրոցեսները: Արտադրանքի ընդունումը, մակնիշավորումը, պահեստավորումը պահեստում և շինարարական հրապարակում:

Կոնստրուկցիաների ամրանային նախապատրաստվածքների իրականացումը: Տարրերի ամրանավորման տեխնոլոգիան ու հսկողությունը: Ամրանավորումը ուժային կաղապարներում և ստենդներում: Նախալարված ամրանավորմամբ կոնստրուկցիաների արտադրության տեխնոլոգիան, ամրանի ձգման տարրերը և հսկումը:

Ցեմենտաքարի, շաղախի, բետոնի, երկաթբետոնի կոռոզիաների էությունն ու տեսակները և դրանցից պաշտպանության մեթոդները:

3. ԿԱՄՈՒՐՋՆԵՐ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԹՈՒՆԵԼՆԵՐ

Ընդհանուր տեղեկություններ կամուրջների և տրանսպորտային թունելների վերաբերյալ: Ինժեներական կառուցվածքների հաշվարկման մեթոդները: Սահմանային վիճակներ:

Մետաղե կամուրջների առանձնահատկությունները, օգտագործվող նյութերը: Մետաղե կամուրջների հիմնական համակարգերը:

Հոծ հեծաններով մետաղե թռիչքային կառուցվածքների կոնստրուկտավորումը և հաշվարկը:

Մետաղե կամուրջների թռիչքային կառուցվածքների պատրաստումը և մոնտաժը: Մետաղե կամուրջների երթևեկային մասի հիմնական տեսակների (օրթոտրոպ սալ, երկաթբետոնե սալ) կոնստրուկտավորման և հաշվարկի սկզբունքները: Երկաթբետոնե սալով մետաղական հեծանների կոնստրուկտավորումը և հաշվարկը:

Միջանցիկ ֆերմաներով հեծանային մետաղե թռիչքային կառուցվածքների կոնստրուկտավորումը և հաշվարկը:

Կախովի, վանտային և կամարային մետաղե կամուրջներ: Ընդհանուր տեղեկություններ, կոնստրուկտավորման և հաշվարկի սկզբունքները:

Երկաթբետոնե հեծանային կամուրջների հիմնական տեսակները: Սալային թռիչքային կառուցվածքների կոնստրուկտավորումը և հաշվարկը:

Անխզելի և կոնսոլային թռիչքային կառուցվածքների կոնստրուկտավորումը և հաշվարկի հիմունքները:

Նախալարված խզված հեծանային թռիչքային կառուցվածքների կոնստրուկտավորումը և հաշվարկը:

Երկաթբետոնե կամուրջների երթևեկային մասը, ջրահեռացումը, ձևախախտող (դեֆորմացիոն) կարերը, հենարանային մասերը, լծորդումները:

Երթևեկային մասի սալի կոնստրուկտավորումը և հաշվարկը: Առանց նախալարման խզված հեծանային թռիչքային կառուցվածքների կոնստրուկտավորումը և հաշվարկը:

Երկաթբետոնե շրջանակային և կամարային կամուրջների կոնստրուկտավորումը և հաշվարկի հիմունքները: Կոմբինացված թռիչքային կառուցվածքներով կամուրջներ:

Կամրջային հենարանների հիմնական տեսակները: Միջանկյալ հենարանների կոնստրուկտավորման և հաշվարկի սկզբունքները:

Եզրային հենարանների կոնստրուկտավորման և հաշվարկի սկզբունքները: Կամուրջների պահպանման, ուժեղացման և վերակառուցման հիմունքները:

Կամուրջների հետազննումը, փորձարկումը և բեռնատարողության որոշումը: Հավաքովի և միաձույլ երկաթբետոնե կամուրջների թռիչքային կառուցվածքների մոնտաժը:

Հավաքովի երկաթբետոնե նախալարված և ոչ նախալարված կամրջային կոնստրուկցիաների պատրաստումը:

Կամուրջների հենարանների հիմքերի ու իրանի կառուցումը:

Տրանսպորտային թունելների ծրագծումը: Թունելների նախագծման և կառուցման ժամանակ կատարվող գեոդեզիական աշխատանքները:

Տրանսպորտային թունելների երեսարկների նյութերը և կոնստրուկցիաները: Լեռնային ճնշումը և թունելային երեսարկների հաշվարկը:

Տրանսպորտային թունելների անցահատման եղանակները:

Կամուրջների սեյսմիկ հաշվարկի սկզբունքները: Կամուրջների սեյսմապաշտպանության ապահովումը:

4. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԿԱ

Լարում: Լարումների թենզորը: Մարմնի կետում լարվածային վիճակի ուսումնասիրությունը:

Դեֆորմացիա: Դեֆորմացիաների թենզորը: Համատեղության հավասարումները: Հուլի օրենքը անիզոտրոպ և իզոտրոպ մարմնի համար:

Առաձգականության տեսության հիմնական հավասարումները, լուծման եղանակները: Առաձգականության տեսության դիֆերենցիալ հավասարումները և դրանց լրացուցիչ պայմանները:

Առաձգականության տեսության խնդրի լուծումը լարումներով և տեղափոխություններով: Առաձգականության տեսության հարթ խնդիրը: Լարումների ֆունկցիա: Ձողերի ոլորումը: Սեն-Վենանի սկզբունքը:

Պլաստիկության տեսության հիմունքները: Առաձգապլաստիկ մարմնի մոդելները: Պլաստիկության տեսության հիմնական առնչությունները:

Հեծանի առաձգապլաստիկ ծռումը: Հեծանային համակարգերի հաշվարկը: Կամարներ, դրանց առանձնահատկությունները, հաշվարկումը: Ֆերմաներ, դրանց առանձնահատկությունները, հաշվարկումը:

Կառուցվածքների հաշվարկումը շարժական բեռնվածքի դեպքում:

Շինարարական մեխանիկայի հիմնական թեորեմները՝ Կլապեյրոնի, Բետտիի, Մաքսվելի:

Ձողային համակարգերի դեֆորմացիայի պոտենցիալ էներգիան:

Տեղափոխությունների որոշման մեթոդները ձողային համակարգերում:

Ստատիկորեն անորոշելի ձողային համակարգերի հաշվարկման մեթոդները: Ստատիկորեն անորոշելի ձողային համակարգերի հաշվարկը ջերմաստիճանի փոփոխության ազդեցությունից, հենարանների նստվածքից: Կառուցվածքների հաշվարկումը վերջավոր տարրերի մեթոդով: Կառուցվածքների դինամիկայի հիմնական խնդիրները, հաշվարկային մոդելները, լուծման եղանակները:

Վերջավոր թվով ազատության աստիճան ունեցող համակարգերի տատանումները: Հեծանների լայնական տատանումները:

Էներգիայի կորստի հաշվի առնումը կառուցվածքների դինամիկական հաշվարկումներում:

Դեֆորմացվող համակարգերի կայունության հետազոտման մեթոդները:

Կենտրոնական սեղմված ձողերի կայունությունը:

Շրջանակային համակարգերի կայունության հաշվարկը:

Կամարների կայունությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբովյան Գ.Ա. Մետաղե կոնստրուկցիաներ:- Եր., 1977, 592 էջ:
2. Բաբայան Հ.Հ. Երկաթբետոնե կոնստրուկցիաներ (Արդյունաբերական և քաղաքացիական շենքերի կոնստրուկցիաներ):- Եր., 1990, էջ:
3. Պետրոսյան Գ.Ս. Շինարարական մեխանիկա: Եր., 1980, 583 էջ:
4. Տեր-Պետրոսյան և ուրիշներ: Նյութագիտություն շինարարների համար:- Եր., 2005, 615 էջ:
5. Հովնանյան Ս.Պ. Նախապես լարված երկաթբետոն պատրաստելու տեխնոլոգիան:- Եր., 1967, 259 էջ:
6. Խաչիյան Է.Ե. Կիրառական երկրաշարժագիտություն: Եր., Գիտույթ., 2001, 310 էջ:
7. Մելքումյան Ս.Ա. Առաձգականության տեսություն (համառոտ դասընթաց):- Եր., 2000, 189 էջ:
8. ՀՀ Շինարարական նորմերի ձեռնարկների Հայաստանի հանքավայրերի բնական ծակոտկեն լցանյութերով թեթև բետոններից բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների նախագծում: Առաջին մաս, Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ առանց ամրանի նախապես լարման:- Եր., 2000:
9. ՀՀ Շինարարական նորմերի ձեռնարկների Հայաստանի հանքավայրերի բնական ծակոտկեն լցանյութերով թեթև բետոններից բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների նախագծում: Առաջին մաս, Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ նախալարված ամրանով:- Եր., 2000:
10. Աղբալյան Յա. Փայտե և պլաստմասե կենսոստրուկցիաներ: -Եր., 2009, 178 էջ:
11. Байков В.Н., Сигалов Э.Е. Железобетонные конструкции: Общий курс. Учебник для вузов, 5-е изд., перераб.- М., Стройиздат, 1991.
12. Железобетонные и каменные конструкции/ под редакцией В.М. Бондаренко, М., Высшая Школа, 2010 – 888 стр.

13. Металлические конструкции/ под редакцией Кудишина Ю.И., 13-е изд., - М., 2011 – 688 стр.
14. Москалев Н.С., Пронозин Я.А. Металлические конструкции, Издательство АСВ, 2014 - 344 стр.
15. Парлашкевич В., Металлические конструкции, 2017 – 112 стр.
16. Калугин А.В. Деревянные конструкции. М. Изд. АСВ, 2003 - 224 с,
17. Семенов К., Кононова М., Конструкции из дерева и пластмасс. Деревянные конструкции, 2016 – 136 стр.
18. Юдина Л., Испытание и исследование строительных материалов, Издательство АСВ, 2010 – 236 стр.
19. Шапошников Н, Кристалинский Р., Дарков А, Строительная механика, 2017 – 692 стр.
20. Перельмутер А., Шишов О., Строительная механика. Компьютерные технологии и моделирование, 2014 – 912 стр.
21. Попов К, Каддо М, Строительные материалы и изделия, Высшая школа, 2008 – 440 стр.
22. Микульский В.Г. и др. Строительные материалы.- М., 2000, 530 с.
23. Баженов Ю.Н. Технология бетона.- М., 2011, 528 с.
24. Гибшман М.Е. Мосты и сооружения на дорогах.-М., Транспорт, 1972, т.1,2, 408, 404с.
25. Е.Е.Гибшман. Проектирование металлических мостов.-М., Транспорт, 1969, 416 с.
26. Лившиц Я.Д., Онищенко М.М., Шкуратовский А.А. Примеры расчета железобетонных мостов.- Киев, Высшая школа, 1986, 263 с.
27. Российский В.А., Назаренко Б.П., Словинский Н.А., Примеры проектирования сборных железобетонных мостов.- М., Высшая школа, 1970, 520 с.
28. Смирнов В.А. Висячие мосты больших пролетов.- М., 1975, 368 с.
29. Бобриков Б.В., И.М.Русаков, А.А.Цариков. Строительство мостов.- М., Транспорт, 1987, 304 с.
30. Осипов В.О. Содержание и реконструкция мостов.- М., 1986, 327 с.
31. Волков В.П. Тоннели и метрополитены.- М., Транспорт, 1975, 552 с.
32. Храпов В.Г. Тоннели и метрополитены,- М., Транспорт, 1989, 383 с.
33. Дарков А.В., Шапошников Н.Н. Строительная механика.- М., Высшая школа, 1986, 607 с.

34. Леонтьев Н. Н., Соболев Д. Н., Амосов А. А. Основы строительной механики стержневых систем: Учебник., М.,Изд-во АСВ, 2000, 541 с.
35. Киселев В.А.Строительная механика. Специальный курс. Динамика и устойчивость сооружений.- М., Стройиздат, 1980, 614 с.
36. Пановко Я.Г., Губанова И.И. Устойчивость и колебания упругих систем.- М., 1987, 352 с.
37. Вольмир А.С., Устойчивость деформируемых систем.- М., Наука, 1967, 984 с.
38. Александров А.В., Потапов В.Д. Основы теории упругости и пластичности.- М., Высшая школа, 1990, 400 с.
39. Терещушко О.И., Основы теории упругости и пластичности.-М., Наука, 1984, 317 с.
40. Тимошенко С.П., Гудьер Дж. Теория упругости.М., 1979, 560 с.
41. Хачиян Э. Е., Сейсмические воздействия на высотные здания и сооружения.- Ер., Айастан, 1973, 327 с.
42. Гусев Б. В., Ин Иен-лян С., Кузнецова Т. В. Цементы и бетоны-тенденция развития.-М., Научный мир, 2012. 134с.
43. Айрапетов Г., А. Строительные материалы.- Учебно-справочное пособие, Ростов на Дону, Феникс, 2004. 603с.
44. Крашенинников О., Н. Краткий курс строительного материаловедения и технологии строительных материалов, Мурманск, 2012, 338с.
45. Невский Б., А. Строительное материаловедение, Ростов на Дону, Феникс, 2009. 589с.

**Ե.23.02 - ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ,
ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ԱՏՈՐԳԵՏՆՅԱ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**1. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

Կապիտալ շինարարություն, նրա դերը հիմնական ֆոնդերի վերարտադրությունում: Միաձույլ և միաձույլ-հավաքովի շենքերի շինարարական և կոնստրուկտիվ լուծումները: Միաձույլ բետոնե և երկաթբետոնե շենքերի կառուցման եղանակները: Կաղապարային աշխատանքներ, կաղապարամածի տեսակները, կիրառվող նյութերը և կաղապարամածի հաշվարկը:

Հոսքային շինարարության էությունը: Հոսքի տեսակները և նրան բնութագրող մեծությունները: Շինարարական գործընթացների կազմը և բնույթը, նրանց նյութական տարրերը և տեխնիկական միջոցները:

Ամրանի նախապատրաստումը և ոչ նախալարված ամրանների տեղադրումը:

Շինարարական արտադրական գործընթացների նախապատրաստումը: Շինարարության կազմակերպման նախագիծ: Շինարարության աշխատանքների կատարման նախագիծ:

Շինարարական արտադրության գործընթացների աշխատանքային քարտեր և տեխնոլոգիական քարտեր: Նրանց կազմը և նախագծման կարգը:

Շինարարական համակարգը: Շինարարությունն իրագործելու ձևերն ու եղանակները: Շինարարական արտադրության նախապատրաստման փուլերը, նրա խնդիրները և կազմը:

Շինարարական հրապարակի ճարտարագիտական նախապատրաստման աշխատանքների նշանակությունը և կազմը:

Շրջակա միջավայրի պաշտպանությունը օբյեկտի շինարարության ժամանակ: Բետոնային խառնուրդի պատրաստումը և տեղափոխումը: Բետոնային խառնուրդի տեղադրումը: Տեղադրված բետոնի խնամքը, կոնստրուկցիաների արտակաղապարումը և որակի հսկումը:

Նախագծման խնդիրները, կազմակերպումը և նախագծային փաստաթղթերի կազմը: Նախագծման փուլայնությունը:

Շինարարական բեռները և տրանսպորտի տարատեսակները շինարարությունում: Բեռնման և բեռնաթափման աշխատանքները շինարարությունում:

Շինարարական կոնստրուկցիաների մոնտաժումը: Մոնտաժման գործընթացի կազմը և կառուցվածքը: Շինարարական կոնստրուկցիաների մոնտաժման եղանակները: Մոնտաժային վերամբարձների ընտրությունը և նրանց ազդման գոտիների որոշումը: Հավաքովի շինարարական կոնստրուկցիաների կախաճոպանումը, նրանց ժամանակավոր և հիմնական ամրացումը: Մոնտաժային աշխատանքների հաջորդականության համատեղումը: Հոսքի կազմակերպումը:

Բնահողեր, նրանց տեխնոլոգիական հատկությունները և հողային կառուցվածքների տեսակները: Հողային աշխատանքների նախապատրաստական և օժանդակ պրոցեսները: Զրահեռացում եւ ջրաիջեցում: Բնահողերի արհեստական ամրացումը և խտացումը:

Մետաղական կոնստրուկցիաներով շենքերի կառուցումը: Փայտե կոնստրուկցիաներով շենքերի կառուցումը:

Բնահողերի մշակումը հողափոր և հողափոր-տեղափոխող մեքենաներով: Բնահողերի մշակման փակ եղանակները:

Խոշորապանելային շենքերի կառուցումը: Կարկասապանելային և ծավալային բլոկներից շենքերի կառուցումը:

Շինարարության օրացուցային պլանավորման տեսակները, դրույթները և լուծվող խնդիրները:

Շենքերի, շինությունների համալիրի շինարարության օրացուցային պլաններ: Տեղամասի ուղղաձիգ հարթեցման ժամանակ հանույթների և լիցքերի իրականացումը հիդրոմեքենայացմամբ: Ձմեռային պայմաններում բնահողերի մշակումը:

Պայթեցման աշխատանքներ:

Շինարարական կոնստրուկցիաների մեկուսիչ ծածկույթների իրականացումը: Ջրամեկուսացման և ջերմամեկուսացման աշխատանքներ:

Պահեստային տնտեսության կազմակերպումը, պահեստների նշանակությունը և դասակարգումը: Պահեստային մակերեսների հաշվարկը, շինարարական նյութերի պահեստավորման կարգը:

Շենքերի կոնստրուկցիաների ուժեղացման աշխատանքները:

Արտադրական, հասարակական և բնակելի շենքերի վերակառուցումը:

Շինարարության գլխավոր հատակագծերի նշանակությունը և տեսակները: Համահրապարակային և առանձին օբյեկտների շինարարության գլխավոր հատակագծերի նախագծումը:

Ցցային աշխատանքներ: Ցցերի տարատեսակները, օգտագործվող նյութերը: Լցովի ցցերի իրականացումը: Խփովի ցցերի իրականացումը:

Շինարարական հրապարակի ժամանակավոր շինություններ՝ նրանց դասակարգումը:

Ստորգետնյա կառույցների շինարարության եղանակները:

Հարդարման ծածկույթների նշանակությունը և տարատեսակները:

Ծեփագործական աշխատանքներ: Ներկարարական աշխատանքներ:

Ցանցային մոդելավորման հիմնական դրույթները և նրանց կառուցման կարգը: Ցանցային մոդելի պարամետրերը և նրանց հաշվարկը:

Պատերի շարվածք, նրա տարրերը, օգտագործվող նյութերը և պատի շարվածքի դարսվածքի կանոնները: Երեսպատման աշխատանքներ:

Հատակային ծածկույթների իրականացում:

Շինարարական հրապարակի ժամանակավոր էլեկտրամատակարարումը: Շինարարության ժամանակավոր ջրամատակարարումը:

Տանիքների իրականացման տեխնոլոգիան:

2. ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գրունտների ֆիզիկական հատկությունները: Կավային գրունտների տեսակի և վիճակի որոշումը:

Գրունտների մեխանիկական հատկությունները՝ սեղմելիությունը, ջրաթափանցելիությունը և սահքի դիմադրությունը: Գրունտային պատվարների դասակարգումը: Գրունտներին ներկայացվող պահանջները:

Շինարարական ելքեր հեռացնող կառուցվածքների տիպերը լեռնային գետերի պայմաններում: Ֆիլտրացիայի հաշվարկը կառուցվածքների տակից՝ ժայռային հիմնատակերի դեպքում:

Հողային պատվարների կոնստրուկտիվ տարրերը: Ոչ ժայռային գրունտների վրա բետոնային պատվարների սխեմաները:

Հարթ ծածկով որմնանեցուկային պատվարների ամրության և կայունության հաշվարկները: Քարահողային պատվարներ, նրանց կոնստրուկտիվ տարրերը:

Հիդրավլիկական հաշվարկներ՝ կապված ջրաթափային պատվարների նախագծման հետ:

Ժայռային հիմնատակերի վրա բետոնային զանգվածային պատվարների կոնստրուկտիվ տարրերը և նախագծման հիմնական հարցերը:

Ոչ ժայռային գրունտների վրա բետոնային զանգվածային պատվարների կոնստրուկտիվ տարրերը և ստորգետնյա եզրագծի նախագծումը:

Կամարային պատվարների նախագծման կոնստրուկտիվ տարրերը և նախագծման հիմնական հարցերը:

Կամարային պատվարների վրա ազդող ուժերը: Ստատիկական հաշվարկների մեթոդները: Հողային պատվարների շեպերի կայունության հաշվարկները:

Ֆիլտրացիոն հաշվարկները գրունտային պատվարներում: Պավլովսկու, Ուգինչուսի, Միխայլովի մեթոդները:

Բետոնային զանգվածային պատվարների կայունության և ամրության հաշվարկները ոչ ժայռային գրունտների դեպքում:

Գրունտային և բետոնային պատվարների ֆիլտրացիոն հաշվարկները: ոչ ժայռային գրունտների դեպքում:

Բաց ջրընդունման ավիային ուղիղ ջրհեռի կոնստրուկտիվ առանձնահատկությունները և հիդրավլիկական հաշվարկը:

Գրունտային պատվարների զանգվածում տեղադրվող ջրհեռ կառուցվածքներ: Հորանային և խրամուղային ջրհեռների կոնստրուկցիաները, նրանց հիդրավլիկական հաշվարկը:

Պատվարային ջրընդունիչներ, նրանց տիպերը և նախագծման ընդհանուր հարցերը: Ջրընդունիչների հիդրավլիկական հաշվարկները: Անպատվարային ջրընդունիչներ, նրանց տիպերը:

Տերիտորիաների չորացումը հորիզոնական ցամաքուրդով: Չորացման խնդիրները և նորման: Չորացման համակարգերի տիպերը, նրանց նախագծման հիմնական սկզբունքները:

Ստորերկրյա ջրերի հաստատված շարժումը դեպի փոխազդեցության մեջ գտնվող ջրհորներ: Ստորերկրյա ջրերի չհաստատված հարթ տարածական շարժման հավասարումը: Ստորերկրյա ջրերի չհաստատված շարժումը փոխազդեցության մեջ գտնվող ջրհորների դեպքում: Ստորերկրյա ջրերի հաստատված շարժումը դեպի ուղղաձիգ ջրհորներ:

Ոռոգման ռեժիմ, ջրման և ոռոգման նորմաների որոշումը: Ոռոգման հիդրոմոդուլի գրաֆիկի կազմումը և կոմպլեկտավորումը: Ոռոգման համակարգերը և նրանց բաղկացուցիչ մասերը: Ոռոգման խնդիրները և հողի ջրաօդային ռեժիմի կանոնավորումը: Ոռոգման հիդրոմոդուլի գրաֆիկի կազմումը և կոմպլեկտավորումը:

Հողի ակտիվ շերտում խոնավության պաշարի որոշումը և կանոնավորումը: Հորիզոնական կատարյալ և ոչ կատարյալ ցամաքուրդի ջրաերկրաբանական հաշվարկը:

3. ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ճանապարհների դասակարգումները: Հաշվարկային արագություններ: Տրանսպորտային հոսքերի շարժման օրինաչափությունները և ռեժիմները: Շարժման շերտի թողունակությունը և շարժման շերտերի քանակի որոշումը:

Ճանապարհի հատակագծի տարրերը /հորիզոնական կորերի հաշվարկը, նշահարումը, ուղիղ և կոր մասերի աղյուսակ/: Հորիզոնական կորերի շառավիղների նշանակումը: Անցումային կորեր: Ծրագծման ժամանակ անվտանգության և շարժման հարմարավետության պահանջների ապահովումը:

Ճանապարհի երկայնական պրոֆիլի տարրերը /թեքություններ, սև և կարմիր նիշեր, աշխատանքային նիշեր և այլն/: Նախագծային գծի անցկացման սկզբունքները տարբեր բնակլիմայական պայմանների դեպքում: Կարմիր նիշերի հաշվարկ:

Ճանապարհի լայնական պրոֆիլները: Տիպարային լայնականներ: Լայնական հատվածքի տարրերի չափսերի հիմնավորումը: Երթևեկային լայնացումը հորիզոնական կորերի վրա: Վիրաժներ: Պահանջներ տեսանելիության նկատմամբ:

Ավտոմոբիլի շարժումը ճանապարհով: Ավտոմոբիլի շարժման դիմադրությունները: Ավտոմոբիլի դինամիկական բնութագրերը: Անվաղողերի կառուցումը ճանապարհի ծածկի հետ: Ավտոմոբիլի արգելակումը: Վառելիքի ծախսի գնահատումը շարժման տարբեր ռեժիմների դեպքում:

Բնական գործոնների ազդեցությունը ճանապարհի աշխատանքի վրա: Ճանապարհային ջրահեռացման սկզբունքները: Մակերևույթային և

ստորգետնյա ջրահեռացման միջոցառումներ: Կողային առունների նախագծումը: Դրենաժների կոնստրուկտավորումը և հաշվարկը:

Փոքր ջրահավաքներից անձրևաջրերի և ձնհալի հաշվարկային ելքերի որոշումը: Զրթող խողովակների և փոքր կամուրջների բացվածքի հաշվարկը: Հունի ամրացումը փոքր արհեստական կառուցվածքներից հետո: Մեծ կամուրջների բացվածքի հաշվարկը: Հաշվարկային ելքերի որոշումը: Կամրջատակ հատվածում առաջացող ընդհանուր և տեղական ողողումները: Ողողման խորությունների գնահատումը: Հիմնատակի նիշերի որոշումը:

Հողային պաստառի ամրությանն ու կայունությանը ներկայացվող պահանջները: Կայունության գործակից: Թույլ հիմնատակերի վրա և թեք լանջերում հողային պաստառի կայունության ապահովումը: Շեպերի կայունության ապահովումը:

Հողային պաստառի գրունտների խտացմանը ներկայացվող պահանջները: Խտացման գործակիցներ: Խտացման աշխատանքները հողային պաստառի շինարարության ժամանակ: Որակի հսկումը:

Հողային պաստառի շինարարության նախապատրաստումը: Նշահարման աշխատանքներ: Հողային պաստառի իրականացումը ոչ ժայռային գրունտներում: Հիմնական մեխանիզմների ընտրությամբ և պահանջի հաշվարկը:

Հողային պաստառի իրականացումը ժայռային գրունտներում: Պայթեցման աշխատանքները հողային պաստառի իրականացման ժամանակ:

Ավտոճանապարհների հատումները և միացումները միևնույն մակարդակում: Անվտանգության կղզյակներ. լրացուցիչ երթևեկային շերտեր: Միևնույն մակարդակում օղակային հատումներ: Թողունակության մեծացման միջոցառումներ:

Տարբեր մակարդակներում տրանսպորտային հանգույցների հիմնական տեսակները և նախագծման սկզբունքները: Երեքնուկի տերև, շեփոր տիպի հատման (միացման) տարրերի հաշվարկը:

Ոչ կոշտ ճանապարհային պատվածքների կոնստրուկտավորման սկզբունքները և ըստ սահմանային թույլատրելի առաձգական ճկվածքի հաշվարկը (օգտագործվող նյութերի և հիմնատակի գրունտի հաշվարկային բնութագրերը, հաշվարկային բեռնվածքներ, բերված ինտենսիվության, պահանջվող առաձգականության մոդուլի, պատվածքի շերտերի հաստության որոշումը):

Կոշտ ճանապարհային պատվածքների կոնստրուկտավորման և հաշվարկի սկզբունքները (օգտագործվող նյութերը, դեֆորմացիոն կարանները, հաշվարկային բեռնվածքները, սալի հաշվարկը արտաքին բեռնվածքների ազդեցության տակ, սալի հաշվարկը ջերմաստիճանային ազդեցության տակ, սալի հաստության որոշումը):

Կոշտ և ոչ կոշտ ճանապարհային պատվածքների նախագծման արտասահմանյան մեթոդներ:

Կոշտ ճանապարհային պատվածքներում օգտագործվող նյութերին ներկայացվող պահանջները: Յեմենտրետոնային ծածկերի կառուցումը սահող կաղապարներով մեքենաների կոմպլեկտով:

Ասֆալտրետոնային խառնուրդների տեսակները: Նյութերին ներկայացվող պահանջները: Ասֆալտրետոնի կազմի հաշվարկը:

Ասֆալտրետոնային ծածկերի շինարարությունը տաք և գոլ խառնուրդներից: Որակի հսկումը:

Ավտոճանապարհի վերակառուցումը (վերակառուցման հիմնավորումը, հատակագծի, երկայնական և լայնական պրոֆիլների վերակառուցումը, ճանապարհային պատվածքների վերակառուցումը և ուժեղացումը, ուղեվածքների վերացման միջոցառումները):

Ճանապարհի ծրագծի անցկացումը լեռնային շրջաններում: Լեռնային ճանապարհների երկայնական և լայնական պրոֆիլների նախագծման առանձնահատկությունները: Ճանապարհների հատումները սողանքային, ձնահուսային տեղամասերի, սելավատարերի հետ:

Հատուկ կառուցվածքներ լեռնային ճանապարհների վրա (թունելներ, հենապատեր, բալկոններ, գալերեաներ): Նախագծման հիմունքները:

Քաղաքային փողոցների հորիզոնական և ուղղաձիգ հատակագծումը /հորիզոնական կորերի շառավիղները, երկայնական թեքությունների սահմանափակումը, փողոցների հատակագծումը նախագծային հորիզոնականների մեթոդով/:

Համակարգչային տեխնիկայի օգտագործումը ճանապարհների նախագծման պրոցեսում (ճանապարհի ծրագծի, երկայնական և լայնական պրոֆիլների, ճանապարհային պատվածքի, արհեստական կառուցվածքների նախագծման, աշխատանքի ծավալների հաշվման ժամանակ):

Ավտոճանապարհների շահագործման համակարգը: Ճանապարհածածկի վիճակի հսկման համակարգերը: Ճանապարհների սեզոնային պահպանումները և վերանորոգումները: Մակերևութային մշակումներ (տեսակները և իրականացման եղանակները):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Վ.Ի., Գյուրջինյան Ա.Հ., Շահվերդյան Ն.Պ., Գրիգորյան Վ.Վ. Չափագիտություն, ստանդարտացում և հավաստագրում շինարարների համար: Ուսումնական ձեռնարկ:- Եր. 2016, 184 էջ:
2. Գրիգորյան Վ.Վ. Տարերային աղետներից վնասված շենքերի ու շինությունների վերականգնման և ուժեղացման աշխատանքների իրականացման մեթոդները: Ուսումնական ձեռնարկ:- Եր. 2014, 132 էջ:
3. Գրիգորյան Վ.Ի., Գյուրջինյան Հ.Գ., Գյուրջինյան Ա.Հ., Պողոսյան Վ.Վ. Բնահողի մշակման տեխնոլոգիան: Ու.ձեռնարկ: Եր. 2003, 154 էջ:

4. Գրիգորյան Վ.Ի., Ղուլյան Ա.Բ., Բաղայան Վ.Ս. և ուրիշներ. Շինարարական արտադրության տեխնոլոգիա: Ուսումնական ձեռնարկ (շինարարական գործընթացների տեխնոլոգիա), I Եր., 2005, 285 էջ:
5. Գրիգորյան Վ.Ի., Ղուլյան Ա.Բ., Բաղայան Վ.Ս. և ուրիշներ. Շինարարական արտադրության տեխնոլոգիա: Ուսումնական ձեռնարկ (շինարարական գործընթացների տեխնոլոգիա), II Եր., 2006, 239 էջ:
6. Գրիգորյան Վ.Ի., Ղուլյան Ա.Բ., Բաղայան Վ.Ս., Գրիգորյան Վ.Վ. Շինարարական արտադրության կազմակերպումը բնականոն և արտակարգ իրավիճակներում:- Եր., 2009, 240 էջ:
7. Բաղդասարյան Ա. Բ. Հիդրոտեխնիկական կառուցվածքներ:- Եր., Լոյս 1986, 480 էջ:
8. Խաչատրյան Է.Հ. Բետոնային զանգվածային ջրթափային պատվարների նախագծումը ոչ ժայռային գրունտների վրա:- Եր., 2009, 80 էջ:
9. Արարատյան Ա.Ս., Ավտոմոբիլային ճանապարհների նախագծում, շինարարություն և շահագործում:- Եր., 1985, 464 էջ:
10. Атаев С.С., Данилов Н.Н., Прыкин Б.В. и др. Технология строительного производства.- М., Стройиздат, 1984, 360 с.
11. Теличенко В.И., Терентьев О.М., Лапидус А.А. Технология возведения зданий и сооружений. Учеб. для стр. ВУЗов.- 2008, 441с.
12. Гришин М.М., Гидротехнические сооружения. Т.т. I и II.- М., Высшая школа, 1979, 615 с. и 336 с.
13. Чугаев Р.Р., Гидротехнические сооружения. Глухие плотины.- М., Агропромиздат, 1985, 318с.
14. Чугаев Р.Р., Гидротехнические сооружения. Водосливные плотины.- М., Агропромиздат, 1985, 302 с.
15. Бабков В.Ф., Андреев О.В., Проектирование автомобильных дорог.- М., Транспорт, 1987, ч. 1, 2, 368 с , 415 с.
16. Строительство автомобильных дорог: Учебник. Т.т. 1, 2, под ред. В.К. Некрасова.- М., Транспорт, 1980, 416, 421 с.
17. Кубасов А.У., Чумаков Ю.Л., Шураков С.Д. Строительство, ремонт и содержание автомобильных дорог.- М., Транспорт, 1985, 336 с.
18. Некрасов В.К. Эксплуатация автомобильных дорог.-М.,Высшая школа, 1983, 287 с.
19. Дубровин Е.Н., Ланцберг Ю.С. Изыскание и проектирование городских дорог.- М., Транспорт, 1981, 471 с.

20. Г.И. Глушков, В.Ф. Бабков, А.С.Смирнов, Изыскание и проектирование аэродромов.- М., Транспорт, 1981, 616 с.
21. Гибшман М.Е., Мосты и сооружения на дорогах.- М., Транспорт, 1972, т.1, 408 с.
22. К.Х.Толмачев, Специальные сооружения на горных дорогах,- М., Транспорт 1986, 200 с.
23. Справочник инженера-дорожника.- М., Транспорт, 1989, 437 с.
24. Абдуллаев А.К, Безоян Э.К, Бусел А.В, Каримов Б.Б. – Ремонт дорожных покрытий. Интенсивные технологии. М., 2015. 270стр.
25. Paul H. Wright Highway engineering, 1996, 680 p.
26. AASHTO Guide for Design of Pavement structures. AASHTO, 1993, 50p.

**Ե.23.03 – ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ
(ԷՆԵՐԳԵՏԻԿ, ՀԻԴՐԱՎԼԻԿ ԵՎ ԱՅԼՆ) ԱՊԱՀՈՎՈՒՄ**

**1. ՋԵՐՄԱԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՕԴԻ
ԿՈՆԴԻՑԻՈՆԱՑՈՒՄ**

Տեխնիկական թերմոդինամիկա

Թերմոդինամիկայի առաջին օրենքի մեկնաբանությունը: Իդեալական գազի վիճակի հավասարումը և թերմոդինամիկական պրոցեսներ: Թերմոդինամիկայի II օրենքը և նրա մաթեմատիկական արտահայտությունը: Էնտրոպիա: Կառնոյի հակադարձելի, անհակադարձելի և հակառակ ցիկլեր: Ջրային գոլորշու P-V, T-S, I-S դիագրամներ:

Ջերմազանգվածափոխանակություն

Ջերմահաղորդականություն: Ջերմային ճառագայթման հիմնական օրենքները: Ջերմափոխանցում: Կոնդենսացման ու գոլորշիացման պրոցեսներում ջերմափոխանցման օրինաչափությունները: Ջերմության կորուստը շինարարական կոնստրուկցիաներով: Ջերմության ծախսը լուսամուտների և արտաքին դռների ճեղքերով ներհոսող օդի տաքացման վրա:

Ջերմամատակարարում

Ջերմային էներգիայի աղբյուրները և նրանց սկզբունքային սխեմաները (ՋԷԿ-եր և կաթսաներ): Ջերմաֆիկացիա, ջերմաֆիկացիայի գործակից: Էլեկտրական և ջերմային էներգիաների համատեղ արտադրություն: Ջրային ջերմամատակարարման համակարգեր: Բաց ջերմամատակարարման համակարգեր: Ջերմային ցանցերի հիդրավլիկական հաշվարկը (այեզոմետրական գիծ, պոմպային ենթակայան): Ջերմային ցանցերի հենարաններ: Կոմպենսատորներ: Ջերմային ցանցերի մոնիտաժման կարգը: Ջերմային ցանցերի վերգետնյա և ստորգետնյա անցկացման եղանակները: Ջերմային ցանցերի փորձարկումը և շահագործման եղանակները: Մեկուսիչի ընտրությունը:

Ջեռուցում

Ջեռուցման համակարգի սկզբունքային սխեման, աշխատանքի սկզբունքը: Երկխողովականի և միախողովականի համակարգերի սխեմաները: Բնական և արհեստական (պոմպային) շրջանառությամբ ջրային ջեռուցման համակարգեր: Ընդարձակման բաք:

Ճառագայթային ջեռուցում: Ջեռուցման համակարգերի հիդրավլիկական հաշվարկները: Ջրաջրային և շոգեջրային արագային ջերմափոխանակիչների կոնստրուկցիաները և նրանց հաշվարկը:

Օդափոխություն

Օդափոխության նշանակությունը և համակարգերի դասակարգումը, սկզբունքային սխեմաները: Խոնավ օդի դիագրամները: Օդի վիճակի պարամետրերը: Օդի քանակի որոշման եղանակները: Օդափոխության երեք խնդիրները: Ջերմության և խոնավության անջատումների հաշվարկը: Ջերմաթափանցումների որոշման մեթոդները: Ջերմության ավելցուկը ամռան և ձմռան պայմաններում: Օդափոխության համակարգերի աերոդինամիկ հաշվարկը: Արդյունաբերական օդափոխության հիմունքներ:

Կաթսայական ագրեգատներ

Վառելիքների դասակարգումը: Վառելիքի այրման ջերմությունը, պայմանական վառելիք: Այրման արգասիքների իրական ծավալը, վառելիքի լրիվ այրման դեպքում: Կաթսայի ջերմային հաշվեկշիռը: Կաթսայի օգտակար գործողության գործակիցը (ՕԳԳ): Էկոնոմայգեր: Ժամանակակից կաթսաների կոնստրուկտիվ զարգացման ուղղությունները:

Օդի կոնդիցիոնացում

Օդի ջերմախոնավային պրոցեսների պատկերումը դիագրամում: Օդի կոնդիցիոնացման մեկ ռեցիրկուլյացիայով համակարգի հաշվարկը: Օդի կոնդիցիոնացման սառնարանային բեռնվածության որոշումը: Օդի սառեցման կայանքների սխեմաները և նրանց հաշվարկի սկզբունքները: Զերմային պոմպերը և նրանց բնութագրերը:

Արևային ջրատաքացման սարքերը:

Գազամատակարարում

Գազի ճնշման կարգավորումը ստատիկական և ապաստատիկական կարգավորիչներ:

Փակուղային և օղակային ցանցերի հաշվարկման մեթոդիկաներ: Ցածր և միջին (բարձր) ճնշման պողպատյա և պոլիէթիլենային գազատարների հիդրավլիկական հաշվարկներ: Գազաբաշխիչ կայանի դերը գազամատակարարման համակարգում: ԳԲԿ-ում իրականացվող տեխնոլոգիական պրոցեսներ: Մայրուղային գազատարների թողունակության և գազատարներում գազի միջին ջերմաստիճանի որոշման մեթոդները:

2. ՀԻԴՐԱՎԼԻԿԱ ԵՎ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ՀԻԴՐՈԼՈԳԻԱ

Հիդրոստատիկա

Հեղուկը և նրա հատկությունները՝ խտություն, սեղմելիություն, հիդրոմեխանիկական ճնշում, մակերևութային և ծավալային ուժեր:

Հիդրոստատիկական ճնշում, ճնշման երեք գաղափար, հիդրոստատիկական ճնշման հատկությունը:

Հեղուկի հավասարակշռության դիֆերենցիալ հավասարումները, հավասարակշռության հիմնական դիֆերենցիալ հավասարումը, հավասար ճնշումների մակերևույթի հավասարումը:

Կաթիլային հեղուկի հավասարակշռությունը ծանրության ուժի դաշտում, ճնշման էփյուրներ, Պասկալի օրենքը: Գազի հավասարակշռությունը ծանրության ուժի դաշտում:

Հեղուկի ճնշման ուժը հարթ պատի վրա, ճնշման կենտրոն: Հեղուկի ճնշան ուժը կոր մակերևույթի վրա, ճնշման մարմնի ծավալ:

Արքիմեդի օրենքը, մարմնի լողալու պայմանները, կանգունակություն:

Հեղուկի հարաբերական հավասարակշռությունը:

Հիդրոդինամիկա

Ուսումնասիրության երկու մեթոդները, ստացիոնար և ոչ ստացիոնար շարժումներ: Անխզելիության հավասարումը եռաչափ շարժման դեպքում:

Կենդանի կտրվածք, միջին արագություն, ելք: Անխզելիության հավասարումը միաչափ շարժման համար:

Իդեալական հեղուկի շարժման դիֆերենցիալ հավասարման ինտեգրումը: Բեռնուլիի հավասարումը: Բեռնուլիի հավասարման երկրաչափական և էներգետիկական մեկնաբանությունները: Բեռնուլիի հավասարումը իրական հեղուկի հոսանքի համար: Հիդրավլիկական թեքություն:

Հիդրավլիկական դիմադրություններ

Բեռնուլիի հավասարման լրացուցիչ անդամի ընդհանուր տեսքը: Շարժման երկու ռեժիմ: Ռեյնոլդսի թիվ:

Էներգիայի կորուստը լամինար շարժման ժամանակ: Պուազելի բանաձևը: Արագությունների բաբախումը տուրբուլենտ շարժման դեպքում:

Արագությունների բաշխումը տուրբուլենտ շարժման ժամանակ:

Լամինար թաղանթ: Ողորկ և խորդուբորդ պատեր: Դարսի-Վեյսբախի բանաձևը: Դիմադրության երեք զոնաները:

Շեգիի բանաձևը: Էներգիայի տեղական կորուստները:

Արտահոսում անցքերից

Արտահոսում հաստատուն ճնշման տակ; Արտահոսման գործակիցների մեծությունները բարակ պատով կլոր անցքի և գլանական կցափողի համար:

Արտահոսում փոփոխական ճնշման տակ: Անոթի դատարկման ժամանակամիջոցը:

Ազատ շիթեր: Շիթի ազդեցությունը անշարժ և շարժվող թիակի վրա:

Հեղուկի ճնշումային ստացիոնար շարժումը խողովակներում

Ճնշումային հավասարաչափ շարժման հավասարումը: Էներգիայի կորուստի հաշվային բանաձևերը (Դարսի-Վեյսբախի և Շեզիի):

Էներգիայի կորուստը հավասարաչափ բաշխված ելքի դեպքում: Պարզ ջրմուղ (խողովակների հաջորդական միացումը):

Խողովակների զուգահեռ միացումը: Երեք ավազանների խնդիրը:

Ջրմուղի ցանցի հիդրավլիկական հաշվարկը (1-ին և 2-րդ տիպի խնդիրները):

Հեղուկի ճնշումային ոչ ստացիոնար շարժումը խողովակներում

Ոչ ստացիոնար շարժման հավասարումը, իներցիոն էջքը և նրա իմաստը:

Ոչ ստացիոնար շարժումը հաստատուն տրամագծի խողովակում:

Հիդրավլիկական հարվածի երևույթը:

Ճնշման բարձրացման բանաձևը ակլնթարթային փակման դեպքում:

Ալիքի տարածման արագությունը:

Ուղիղ և ոչ ուղիղ հարված:

Խողովակաշարերի պաշտպանությունը հիդրավլիկական հարվածից (հիդրավլիկական հարվածի մարիչներ):

Ուղիղ և ոչ ուղիղ հարվածի գրաֆիկական մեթոդի հիմունքները:

Գազերի միաչափ շարժումը

Ձայնի տարածման արագությունը:

Բեռնուլիի հավասարումը իդեալական գազի համար:

Կենդանի կտրվածքի և արագության կապը: Լավալի փողոակը:
Գազի արտահոսումը անցքերից: Էներգիայի կորուստի հաշվարկը
գազատար ցածր ճնշման ցանցերում: Գազի մեծ արագությամբ իզոթերմ
շարժումը հաստատուն տրամագծով խողովակում:

Հավասարաչափ շարժումը բաց հունքում

Հավասարաչափ շարժման հավասարումը: Ջրանցքների հաշվարկի բնո-
րոշ խնդիրները: Հիդրավլիկական նպատակահարմար կտրվածք:
Փակ կտրվածքի առանձնահատկությունները: Թույլատրելի արագություն-
ները ջրանցքում:

Անհավասարաչափ շարժումը բաց հունքում

Տեսակարար էներգիան վերագրած կենդանի կտրվածքի ամենացածր
կետին: Կրիտիկական խորությունը և նրա որոշելը:
Անհավասարաչափ ստացիոնար շարժման հավասարումը:
Բուռն և հանդարտ շարժում: Կրիտիկական թեքություն:
Ազատ մակերևույթի կորերի տեսքը պրիզմայաձև հունում:
Անհավասարաչափ շարժման դիֆերենցիալ հավասարման ինտեգրման
մեթոդները: Ազատ մակերևույթի կորերի կառուցումը վերջավոր աճերի
մեթոդով:

Ջրաթափեր

Բարակ պատով ջրաթափ: Մոտեցման արագության ազդեցությունը:
Սուզված և չսուզված ջրաթափեր: Գործնական կողատեսքի ջրաթափ:
Լայն շեմքով ջրաթափ: Հորանային ջրաթափ: Մարգարիտկա:

3. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ

Ջրամատակարարում

Բնակավայրի հաշվային ջրապահանջի որոշումը՝ ջրապահանջի նորմեր և
ջրաօգտագործման ռեժիմ:
Ջրաղբյուրներ, ստորերկրյա և մակերևույթային ջրաղբյուրներ և դրանց
որակական գնահատումը:

Կոնտրոլեզերվուարով ջրամատակարարման համակարգերի աշխատանքի ռեժիմի և ջրի բաշխման առանձնահատկությունը:

Ջրատարների և ջրմուղի ցանցերի հիդրավիկական հաշվարկը՝ տրամագծերի ընտրությունը, ջրի ճնշման կորուստների որոշումը (տեսական հիմունքներ): Ջրամատակարարման համակարգերի աշխատանքի հուսալիության խնդիրները, հուսալիության ապահովման լուծումները:

Պաշարապահ և կարգավորիչ ծավալներ, դրանց ֆունկցիաները և ծավալների որոշումը:

Գոտիավոր ջրամատակարարման համակարգեր՝ գոտիավորման սկզբունքները և տեսակները:

Ջրամատակարարման համակարգերում օգտագործվող խողովակներ և ձևավոր մասեր, ցանցերի մասավորումը:

Ջրընդունիչ կառուցվածքների առանձնահատկությունները լեռնային գետերից ջուր վերցնելու դեպքում:

Ստորերկրյա ջրաղբյուրների ջրընդունիչներ՝ դրանց դասակարգումը և կոնստրուկցիաները:

Սանիտարական պահպանության գոտիների կազմակերպումը ջրամատակարարման համակարգերում:

Ջրի որակական ցուցանիշների գնահատումը, ջրաղբյուրների ջրի որակին ներկայացավող պահանջները, տարբեր սպառողների կողմից ջրի որակին ներկայացող պահանջները (խմելու ջրի որակը):

Ջրի մաքրման կայանի տեխնոլոգիական սխեման, կառուցվածքների ֆունկցիոնալ նշանակությունը: Ջրի կոագուլավորումը՝ գործընթացի նկարագիրը, խառնարաններ, ռեակցիայի խուցեր:

Ջրի նստեցման օրինաչափությունները՝ պարզարանների տիպերը և դրանց աշխատանքի սկզբունքը: Հիդրավիկական խոշորություն:

Ջրի ֆիլտրումը: Ֆիլտրման գործընթացի նկարագիրը, պաշտպանական գործողության ժամանակամիջոց և ֆիլտրի աշխատանքի տևողությունը ըստ սահմանային ճնշման մեծության:

Ֆիլտրող նյութեր՝ դրանց նկատմամբ ներկայացվող պահանջներ և գնահատման պարամետրերը:

Դանդաղ գործողության ֆիլտրեր՝ կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Ջրի ախտահանումը՝ ախտահանման եղանակները, ախտահանումը քլորի միջոցով:

Ջրի մշակման նորագույն տեխնոլոգիաներ՝ համի, հոտի վերացում, մեմբրանային ֆիլտրում (միկրոֆիլտրում, նանոֆիլտրում): Ջրի փափկեցումը՝ մեթոդները, սարքավորումները և հաշվարկի սկզբունքները:

Արտադրական ձեռնարկությունների ջրամատակարարման համակարգերը ու սխեմաները և դրանց առանձնահատկությունները:

Ջրահեռացում

Ջրահեռացման սխեմաներ և համակարգեր: Ջրահեռացման ցանցի կառուցվածքը, ծրագծման ձևերը և հաշվարկային ելքերի որոշումը:

Ջրահեռացման ցանցերի հաշվարկի սկզբունքները՝ հաշվարկային պարամետրերի որոշումը:

Մթնոլորտային կեղտաջրերի հեռացումը՝ ցանցի սխեմաները, կառուցվածքը և հաշվային ելքերի որոշումը:

Կեղտաջրերի կազմը և որակական ցուցանիշները, կեղտաջրերի ազդեցությունը ջրավազանների ջրի որակի վրա:

Կեղտաջրերի և նստվածքների մշակման մեթոդները, կեղտաջրերի մաքրման սխեմայի ընտրությունը: Կեղտաջրերի մաքրման տեխնոլոգիական սխեմաները՝ մեխանիկական, կենսաբանական:

Կեղտաջրերի մեխանիկական մաքրման կառուցվածքները՝ ճաղավանդակներ, ավազորսիչներ, պարզարաններ:

Կեղտաջրերի կենսաբանական մաքրման կենսաքիմիական հիմունքները:

Աերոտենկերում կեղտաջրերի մաքրման սկզբունքները, ակտիվ տիղմի հիմնական բնութագրերը: Աերոտենկերի հաշվարկի սկզբունքները:

